# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 99

ք. Վանաձոր 2012թ./երկու հազար տասներկու/ [illegible] «08»

Վանաձորի համայնքի ավագանին, ի դեմս համայնքի ղեկավար Սամվել Դարբինյանի, որի անունից լիազորագրով հանդես է գալիս «Գույքի կառավարման և եկամուտների հավաքագրման» բաժնի պետ Վիկտոր Դարբինյանը, այսուհետ «Վարձատու», որը գործում է Վանաձորի համայնքի ավագանու 11.04.2012թ թիվ 13-Ա որոշման հիման վրա մի կողմից, և «ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԸՆԴԵՐՔԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆԸ» ի դեմս աշխատակազմի ղեկավար Կարեն Աշոտի Ղահրամանյանի, որի անունից համաձայն լիազորագրի, հանդես է գալիս ՀՀ ԷԲՊՆ աշխատակազմի ընդերքի վերահսկողության պետական տեսչության հյուսիսային տարածքային ստորաբաժանման պետ Գեղամ Սերյոժայի Խաչատրյանը, այսուհետ՝ «Վարձակալ», մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Վանաձորի համայնքի ղեկավարի և ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի վերահսկողության պետական տեսչության միջև 07.08.2009թ. կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության թիվ 296 պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 2017թ. ապրիլի 11-ը՝ ամսական վարձավճարի չափը սահմանելով 15180 /տասնհինգ հազար հարյուր ութսուն/ ՀՀ դրամ:
2. Սույն համաձայնագիրը կնքված է հինգ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:
3. Սույն համաձայնագիրը ենթակա է նոտարական վավերացման և պետական գրանցման, որը պետք է իրականացվի նոտարական վավերացման պահից 30-օրյա ժամկետում:
4. Սույն համաձայնագրի նոտարական վավերացման և իրավունքի պետական գրանցման ծախսերը կատարվում են վարձակալի կողմից:

## Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները ու ստորագրությունները.

**Վարձատու**

ք.Վանաձոր, Հայքի հրապարակ
Վանաձորի գանձապետական բաժանմունք
հ/հ 900235401123
Լիազ. անձ՝ Վ.ԴԱՐԲԻՆՅԱՆ

**Վարձակալ**

«ՀՀ էներգ.և բն.պաշարների նախարութ.»
աշխատակազմի ղեկավար՝
Կարեն Աշոտի Ղահրամանյան,
որի անունից, համաձայն լիազորագրի,
հանդես է գալիս
Գեղամ Սերյոժայի Խաչատրյանը,
ք.Երևան, Արցախի պող.թիվ 6ա/4
անձնագիր՝ 009/AC 04823724
հեռ.՝ 010/564801, 093/808086

Գեղամ Խաչատրյան

ԱՎԵՐԱՑՄԱՆ ՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎՐԱ

կու հազար տասներկու թվականի ամսի « 08 »

յն պայմանագիրը վավերացված է իմ՝ «Վանաձոր» նոտարական

արածքի նոտար՝ Ասլանյան Մ. կողմից:

ղմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ:

ղմերի, նրանց լիազոր ներկայացուցիչների ինքնությունը, նրանց գործունակությունը և /կամ/

րավունակությունը ստուգված են:

անցված է սեղանամատյանում N 2407 -ով

ւանցված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն

Հ «Պետական տուրքի մասին» և ՀՀ «Նոտարիատի մասին» օրենքների:

ո տ ա ր՝ ______________________

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԿԱՅԱԿԱՆ
## *ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ*

Սույն վկայականով հաստատվում է «25» Մայիսի 2012 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

### *1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

### *2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ*

Մարզ Լոռի, համայնք Վանաձոր ք. Տիգրան Մեծի պողոտա թիվ 22 մասնաշենք

### *3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ*

Համաձայնագիր թիվ 99 08/05/2012թ.

### *4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ*

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

## ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/հ | Կադաստրային ծածկագիրը | Տեսակը | Մակերեսի չափը | Գրանցված իրավունքի տեսակը |
|---|---|---|---|---|
| 1 | **06-001-0042-0001-008** | **տարածք** | **50.6 ք.մ.** | **ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ** |

### *Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ*

Վարձակալության պայմանագրի ժամկետը սահմանված է մինչև 11/04/2017թ., ամսեկան վարձավճարը կազմում է 15180դրամ:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Անի Պետրոսյան Լոռի ՏՍ

Զբաղեցրած պաշտոնը՝ Լոռի ՏՍ անշարժ գույքի ռեգիստր

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի՝ վկայականը տրամադրող սպասարկման գրասենյակի
Կ.Տ.

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ

ք. Վանաձոր                    2014թ./երկու հազար տասնչորս / մարտի « 03 »

Համաձայն ՀՀ Էներգետիկայի և Բնական Պաշարների Նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության հյուսիսային տարածքային ստորաբաժանման պետ-ընդերքի տարածքային ավագ պետական տեսուչ Գեղամ Սերյոժայի Խաչատրյանի գրության ՝ Վանաձորի համայնքի ղեկավարի և ՀՀ ԷԲՊ Նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության հյուսիսային տարածքային ստորաբաժանման միջև կնքված 08 մայիսի 2012թվականի թիվ 99 համաձայնագրի 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը.

«50.6քմ մակերեսով» բառակապակցությունը փոխարինել «12.65քմ մակերեսով» բառակապակցությամբ՝ ամսական վարձավճարի չափ սահմանելով 15 180 /տասնհինգ հազար հարյուր ութսուն/ ՀՀ դրամը:

Վարձատու

ք.Վանաձոր, Հայքի հրապարակ
Վանաձորի գանձապետական բաժանմունք
h/h 900235401123
Լիազ. անձ՝ Ա.ԻՍՊԻՐՅԱՆ

Վարձակալ

«ՀՀ էներգ.և բն.պաշարների նախարութ.»
աշխատակազմի ղեկավար՝
Կարեն Աշոտի Ղահրամանյան,
որի անունից, համաձայն լիազորագրի,
հանդես է գալիս
Գեղամ Սերյոժայի Խաչատրյանը,
ք.Երևան, Արցախի պող.թիվ 6ա/4
անձնագիր՝ 009/AC 04823724
հեռ.՝ 010/564801, 093/808086

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ք. Վանաձոր                    2014թ./երկու հազար տասնչորս/ օգոստոս «06»

Հիմք ընդունելով Վանաձորի համայնքի ավագանու 15.11.2013թ. թիվ 99-Ն որոշման 2-րդ հավելված 4-րդ կետը՝

Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի և «ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի վերահսկողության պետական տեսչության» միջև 08.05.2012թ. կնքված պայմանագրի 4.1 կետում կատարել հետևյալ փոփոխությունը.

1. ոչ բնակելի տարածքի վարձակալության վարձավճարի փոփոխման հետևանքով 50.6քմ մակերեսով գույքի վարձակալության ամսական վարձավճարի չափ սահմանել «15180/տասնհինգ հազար հարյուր ութսուն/» ՀՀ դրամի փոխարեն «60720/վաթսուն հազար յոթ հարյուր քսան» ՀՀ դրամ **2015թ. հունվարի 1-ից**:
2. Սույն համաձայնագիրը գրված է երկու օրինակից, որոնք տրվում են յուրաքանչյուր կողմին:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները ու ստորագրությունները.

Վարձատու

ք.Վանաձոր, Հայքի հրապարակ
Վանաձորի գանձապետական բաժանմունք
հ/հ 900235401123
Լիազ. անձ՝ Ա.Խսպիրյան

Վարձակալ

«ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի վերահսկողության պետական տեսչություն» աշխատակազմի ղեկավար՝ Կ.Ղահրամանյան
լիազոր անձ՝ Գեղամ Խաչատրյան
հեռ. 093 808086